զամենայն աւուրս կենաց իւրեանց ըստ նմանութեան Օրինակին։

ԳԼՈՒԽ ԼԱ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երիս սեպհական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ, վասն դիւրութեան և թեթևութեան և հեշտութեան ջատագովելոյ առաջի ատենի տանուտերաց մէջ տանն հայոց վասն հարկաց մաքսից, հասից, բաժնից, տոկոսաց և այլն, վասն բարութեան հասարակ ժողովրդոց, և 'ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան ժամանակաւ երիս ամաւ ըստ նմանութեան Օրինակին։

ԳԼՈՒԽ ԼԲ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երիս վասն զգոյշանալոյ 'ի վերայ ռոճկի հատուցման պաշտօնատարաց, 'ի տանէն հայոց տացի սոցա նամակ պաշտօնատարութեան ռոճկապետութեան ըստ նմանութեան Օրինակի։